

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԶՔՈՅՍ Ի ՔՈՅՈՑ ՔԵԶ ՄԱՏՈՒՑԱՆԵՄ

Ամենայն Հայոց հավատքի կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայր տաճարում ապրիլի 4-ին Ազգային-Եկեղեցական սրբազումար ժողովը Ամենայն Հայոց ընդհանրական Հայրապետ ընտրեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Բ շնորհազարդ Հայրապետին: 130 կաթողիկոսների աստղաճույլին ավելացավ մի նոր լուսավոր ու մաքրափայլ անուն՝

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա.
Վեհափառ և Սրբազնագույն Կաթողիկոս
Ամենայն Հայոց

Էջմիածինը որպես «խորհուրդ խորին», որպես հայ հավատքի բաբախուն սիրտ ի մի համախմբեց բոլորին, Հայաստան աշխարհի չորս ծագերից՝ հյուսիսից, հարավից, արևելքից և արևմուտքից, ինչպես նաև Արցախա չքնաղ և զմրուխտյա աշխարհից, ապա և աշխարհի բոլոր կողմերի հեռու-մոտիկ անկյուններից, որտեղ կա հայ եկեղեցի, հայ շունչ և հայ ոգի, օտար ազգերից ու եկեղեցիներից, որպեսզի միասին տոնախմբվեր նորընտիր Վեհափառի գահակալության հանդեսը:

Ծաղկազարդի հրաշալի և փառավոր տոնին ծաղկազարդվեց Հայաստանյայց Մայր Եկեղեցին՝ իր բոլոր ուստերով: Վերացավ ագո քողը, շնորհազարդ նոր պատմությանով զարդարվեց Քրիստոսի Իջման սեղանը:

Այսօր, Վեհափառ, քեզ եմ ընծայում իմ բանավոր ընծան, քո իսկ երանիներով, որ ընծայաբերեցիր քո նախորդին՝ երկնային կյանքի ճանապարհին քո հրաժեշտի խոսքը ասելիս:

«—Երանի՜ քեզ, ոգեշեն և ժողովրդաշեն Հայրապետ»,—

որ քո 18-ամյա գահակալության ընթացքին լուսավորչաշեն գավազանը ձեռքիդ ջանք ու եռանդ չխնայեցիր քրիստոնեությունը ամրապնդելու ի սփյուռս ցրված զավակներիդ հոգիներում: Քրիստոնեությունը որպես հայության ինքնաարտահայտման ոգեղեն ներկայություն «իբրև զգոյն մորթոյ» առնչվեր փառավորեցիր;

Դարձար «Կենաց Բանին» մեծ քարոզիչը: Քրիստոնեության հավատքն ու գաղափարը դարձրիր հայ ժողովրդի զրահանդերձը, որպես ուժի անփոխարինելի բարիք՝ ընդդեմ չարի ու բռնության:

Ավետարանի քարոզչությամբ նոր կյանք շնորհեցիր քո ժողովրդին, որպես Լույսի Կյանք, Սիրո Կյանք, Հավատքի Կյանք:

Քրիստոսի Հարության տեսիլքով ներշնչված շրջեցիր ու ամենուր պատգամեցիր առաքյալի աստվածաշունչ խոսքը. «Ուրեմն, եղբայրներ, աղաչում ենք ձեզ և հորդորում Քրիստոս Հիսուսով, որ ինչպես սովորեցիք մեզնից, այնպես ընթանաք և հաճելի լինեք Աստծուն... Եվ գիտեք, թե ինչպիսի պատվերներ տվեցինք ձեզ Տեր Հիսուսով, որովհետև Աստծու կամքը ա՛յս է, որ դուք սուրբ լինեք» (Ա Թեսաղ. Դ 1—3):

«—Երանի՜ քեզ, Էջմիածնասեր ու եկեղեցաշեն Հայրապետ»,—

գործեցիր դրսում, բայց միշտ բարձր պահեցիր Էջմիածնի լուսաշող անունը, միշտ վառ պահեցիր քո հոգու ներսում Լուսավորչի կանթեղից առած անմար կրակը հայ հավատքի: Էջմիածինը քեզ համար դարձրիր հավատամք՝ գրելով.

«Իջման սեղանին երկրպագելով գրեթե ամեն օր, անպայման ամեն անգամ, երբ Մայր տաճարից ներս ոտքերս եմ դնում, զգում եմ լուսահոս ալիքը Հիսուսի իջման, որ տարածվում է ողջ Էությանս ափերի վրա, ներթափանցելով բոլոր այն տարրերի մեջ, որոնք ես եմ, այլապես եղած չլինելու պայմանով և աստիճանով»: Եվ այդ հավատամքը քարոզեցիր ամենուր, ուր որ եղար, Հայաստանի մեջ թե արտասահմանում, հայ շրջանակներում թե օտար, անհուն սիրով և երկյուղածությամբ, հոգուդ քնարով հնչեցրիր աստվածային խորհրդի ձայնը և դրոշմեցիր ամենուր թանձրացյալ պատկերը տառագրելով՝ Էջմիածին:

«—Երանի՜ քեզ, հոգեշեն և գրքաշեն Հայրապետ»,—

Անթիլիասի Մայր տաճարի բակը դարձրած ոգեղեն մի սկիհ, «Հայոց գիրն ու խոսքը» դարձնելով նշխար ու գինի, հրավիրեցիր բոլորին Սուրբ Հաղորդության: Որպես գրիչ, որպես դպիր, հայ գիրքը դարձրիր պատիվը հայի, պարտքը հայի, զրահանդերձը հայի, բալասանը հայի, այգեստանը հայի:

Հայ մարդուն դրեցիր հայ գրքի դիմաց, որպեսզի հայ մարդը հայոց լեզվով իր աղոթքը առաքի առ Աստված: Ս. Մեսրոպի անմեռ լեզուն հայոց լուսաքաղձ աչքերի դիմաց, նախանձախնդրությամբ հնչեցրիր օտար ափերում՝ Մայրիների սյուքի ներքո: Մշտարթուն կերպով հնչեցրիր «Չմոռանանք. հայ ժողովրդի կյանքի մեջ գիրքը ծնվել է Սուրբ Գրքով, Աստվածաշունչ Մատյանով: ...Սրբության, նվիրականության օծում ունի իր մեջ հայ գիրքը: Հայրենի՜քն է հայ գիրքը: Վարդանանց բանակ են հայ տառերը, Խորենացիական պատգամ են հայ պատգամախոս մատյանները, Նարեկյան աղոթք են հայ բանաստեղծությունները, երգի բարձրացած Շնորհալիական մեղեդիներ են քնարական հոգեխոս քերթվածները»:

Անճառելի ճշմարտություն:

Հարգանք և երախտիք հայ գրքին:

Եվ վերջապես տվեցիր նորօրյա պատգամ.

«— Խոնարհվի՛ր հայ գրքի առջև, որպեսզի բարձանաս հայ գրքով»:

«—Երանի՜ քեզ, միասնաշունչ ու միութենական Հայրապետ»,—

որ Հայ Եկեղեցու միասնականությունը ամրապնդող քո քաջալերական և հուսադրիչ գործունեությամբ քո նախորդի հետ միախորհուրդ և միասնական ի հեճուկս հակառակորդների նոր դարագլուխ կերտեցիր ի հաճույս Ամենակալի և մեր տառապյալ ազգի:

Քո նախորդի հետ մեկտեղ կոչ հղեցիք մեր հայրենի պետությանը բոլոր պատասխանատուներին, մեր ժողովրդի բոլոր զավակներին, մեծերին և փոքրերին, արանց և կանանց, ծերոց և տղայոց, որ արթուն և մաքուր պահեն իրենց հոգիները, որ անսասան պահեն իրենց անաղարտ հավատքը, իրենց աչքի լույսի պես՝ ի գին իրենց արյան:

Եվ ապա դարձար և վերստին կոչեցիր.

«Մեկ ազգ, մեկ Հայրենիք, մեկ Եկեղեցի ամեն բանից առաջ»:

«Երանի՜ քեզ, հայրենաշունչ ու ազգաշունչ Հայրապետ»,—

որ շրջեցիր ու քարոզեցիր Ավետարանի քարոզչությանը զուգընթաց «վասն հայրենեաց»... Մանկությանդ օրերից սկսյալ մինչև «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ դառնալդ գործելակերպի մի սկզբունք ունեցար. «Վասն Աստուծոյ և վասն Հայրենեաց»:

«Ի՞նչ պետք է անենք», «ինչ՞ կարող ենք անել»-ու փոխարեն գործնական և քաղաքացիական բարձր պարտականությամբ ու գիտակցությամբ, սիրող, հոգիդ, ֆիզիկական գոյությունդ և նյութականդ ի սպաս բերեցիր Հայրենիքիդ և պատգամեցիր ամեն հայի, որ Հայրենիքի շինության համար «Հարկ է որ մասնակցես, քո հայի իրավունքդ պարտքովդ արժևորես: Այս հիմքն է աշխարհի բոլոր առողջ ու մեծ, տոկուն ու ծաղկուն ազգերի և պետությունների»:

«—Երանի՜ քեզ, բարեշունչ ու բարեգործ Հայրապետ»,—

որ բարեզարդեցիր ու պայծառացրիր Հայաստանյայց Եկեղեցին: Բարձր պահեցիր պատիվը մեր Մայր Եկեղեցվո և հայ ժողովրդի: Ոգևորեցիր և գոտեպնդեցիր քո զավակներին՝ միշտ նույնը կրկնելով. «Սիրելինե՞ր, արժանիք ունենալը մի բան է, արժանիք ունենալու գիտակցություն ունենալը ուրիշ բան է: Որպես ազգ այս արժանիքը շահեցինք. արժեքը ունեցանք. բայց եթե չգիտենք արժանիքը ունենալու արժեքը, ունենալը ի՞նչ արժի: Մենք պատիվը ունենք այսօր աշխարհի մեջ մեր հայրերի մեզ ժառանգ թողած արժանիքը ունենալու: Հպարտությամբ ենք ասում երբեմն օտարներին, թե՝ մենք աշխարհի առաջին ազգն ենք, որ պետականորեն ճանաչեցինք Քրիստոնեությունը որպես ազգային կրոն: Այո՛, ասելը հեշտ է, բայց այն արժեցնելը մեր կյանքով, մեր գործով, մեր վկայությամբ, մեր ստեղծագործությամբ, ա՛յդ է մեր բուն, սեփական արժանիքը: Ձեր հայրերի ձեզ տվածով հպարտացեք, բայց մի՛ գոհացեք, նրա վրա ավելացրեք ձեր պատիվը, ձեր կենդանի վկայությամբ շահեցեք պատիվը»:

Այո՛, այդ արժանիքը ունենալու հպարտության գիտակցությամբ մի՞շտ գործեցեք վասն փառացն Աստուծո, վասն պայծառության Մայր Եկեղեցվո և վասն բարեշինության Մայր Հայրենիքի:

«—Երանի՜ քեզ, աստվածաշեն Հայրապետ»,—

որ քո անձի խոնարհությամբ և բոլորանվեր հնազանդությամբ մնացիր հավատարիմ ուխտիդ, որ է ծառայել Աստուծո և աստվածաշեն ընթացքով մատակարարել ազգիդ:

Այսպիսով ծառայեցիր և ծառայում ես քո կոչմանը: Կենդանացնում և զվարթացնում ես նոր շնչով քո ժողովրդին և խնդակից դառնում նրան:

Քո ուխտի առաջին իսկ պահին բաց ճակատով կանգնեցիր Աստծո առաջ և հպարտորեն ասացիր

«— Ահավասիկ ես, առաքի՛ր ինձ»:

«—Երանի՜ քեզ, երջանկությանդ համար»,—

որ այսօր, որպես ազգընտիր Հայրապետ Ամենայն Հայոց, նոր տեսիլքներով գոտեպնդված շարունակում ես քո ծառայությունը՝ հիշելով Առաքյալի կազդուրիչ խոսքերը. «Քանի որ ունենք այս պաշտոնը Աստծու ողորմությամբ, չենք տկարանում» (Բ Կորնթ., Դ 1):

Քրիստոսի Ավետարանի փառքի լույսը ունենալով միշտ ուղեկից, ստանալով Սուրբ Հոգու առատահեղ շնորհները, նախախնամության ներքո Ամենակալն Հոր Աստուծո, օ՛ն հառաջ, Հայրապետ Հայոց, ի սեր քո ժողովրդի:

Եվ վերջապես:

Երանի՜ քեզ, հայ ժողովրդին Աստծո թագավորության ժառանգակիցը դարձնելու սրբազան գործում:

Հայ ժողովրդի հոգու խնամակալ և պահապան, կենդանի բժիշկ և մատակարար, երբ Տերը գա իր փառքով Երկրորդ Գալստյամբ, կկանգնես Նրա Աջ կողմում ու կասես.

— Ահավասիկ ես և իմ ժողովուրդը, դատի՛ր ինձ ըստ իմ գործերի և ողորմի՛ր իմ ժողովրդին. ամեն: